ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Медицинский Центр "Норк-Мараш"
Армения, г. Ереван, Норк,
ул. А. Арменакяна 108/4
Тел: (+37410) 65 09 71; 65 09 61
Факс: (+37410) 65 38 69
или 65 05 60

ՀՀ, ք. Երևան, Նորք
Ա. Արմենակյան 108/4
Հեռ. (+37410) 65 09 71; 65 09 61
Ֆաքս (+374 10) 65 38 69
կամ 65 05 60

"Nork-Marash" Medical Center
Armenakian str. 108/4
Yerevan 0047, Armenia
Phone: (+37410) 65 38 69
Fax: (+37410) 65 38 69, 65 05 60
E-mail: heart@nmmc.am

25.05.2022թ.

N 08-132

<<Պրո-Մեդ Պլուս>> ՍՊԸ տնօրեն
պարոն Կ. Աղամալյանին

Հարգելի պարոն Աղամալյան

Սույնով տեղեկացնում ենք Ձեզ, որ <<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի և <<Պրո-Մեդ Պլուս>> ՍՊԸ-ի միջև 10.01.2022թ կնքվել է ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-9 ծածկագրով պայմանագիրը: Նշված պայմանագիրը կնքվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պայմանների կիրառմամբ հայտարարված գնման ընթացակարգերի շրջանակներում: Համաձայն ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջների, ինչպես նաև պայմանագրի 8.15 կետի պայմանների <<Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:>>

Ֆինանսական միջոցների հատկացման և վճարման պայմանի վերաբերյալ համաձայնագիր կնքելու ծանուցումը նշված պայմանագրի մասով Ձեզ ներկայացվել են 26.04.2022թ-ին, ուստի Դուք կրում էիք պարտավորություն մինչև 18.05.2022թ. ներառյալ Պատվիրատուին ներկայացնել կնքված համաձայնագիրը, ինչը չեք կատարել:

Միաժամանակ, մինչև համաձայնագիր կնքվելը Ձեր կողմից իրականցվել են որոշ մատակարարումներ պայմանագրերի շրջանակներում, որոնք ընդունվել են Պատվիրատուի կողմից՝ անհրաժեշտությունից ելնելով, ուստի Պատվիրատուն համարում է այդ մասով Պայմանագիրը Ձեր կողմից փաստացի կատարված:

Հիմք ընդունելով վերոգրյալները նշված պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է Պատվիրատուի կողմից պայմանագրերի չկատարված մասով՝ 4137281.2 (չորս միլիոն հարյուր եռեսունյոթ հազար երկու հարյուր ութսունմեկ ամբողջ երկու տասնորդական) ՀՀ դրամի չափով, որի հաշվարկը ներկայացվում է ստորև՝ աղյուսակի տեսքով:

Տեղեկացնում ենք նաև, որ ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջների համաձայն Ձեր ընկերությունից կգանձվի պայմանագրի և որակավորման ապահովումները պայմանագրի լուծված մասերին համապատասխան:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Վաճառողը համարվում է Պայմանագիրը միակողմանի լուծվելու մասին պատշաճ ծանուցված սույն ծանուցումը Գնորդի կողմից տեղեկագրում հրապարակելու հաջորդ օրվանից:

	Պայմանագրով նախատեսված		Մատակարարված		Չմատակարարված	
Մատակարարը, Պայմանագրի համարը, ապրանքների անվանումները	քանակը	գումարը	քանակը	գումարը	քանակը	գումարը
Պրո-Մեդ Պլուս ՍՊԸ, ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-9	52 014	4 768 000,0	28 545	630 718,8	23 469	4 137 281,2
Բախիլ	50 000	199 000,0	28 000	111 384,0	22 000	87 616,0
Ինդիկատոր ժապավեն գազային մանրէազերծման	1 000	3 600 000,0	40	144 000,0	960	3 456 000,0
Ինդիկատոր ստրիպ պլազմային մանրէազերծման	1 000	80 000,0	500	39 960,0	500	40 040,0
Մանրէազերծման ռուլոն 40սմ	6	414 000,0	4	276 000,0	2	138 000,0
Մանրէազերծման ռուլոն 20սմ	8	475 000,0	1	59 374,8	7	415 625,2

ՏՆՕՐԵՆ Մ. ՅՈՒ. ԱԴԱՄՅԱՆ

Կատարող՝
գնումների բաժին
հեռ. 010-650560